ԳԵՈՐԳ ՍԻՄՈՆ ՕՀՄ

Զարմանալի կյանք է ապրել խառատի ընտանիքում մեծացած այս գերմանացի տաղանդավոր գիտնականը: Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ՝ նա գիտական աշխարհում ճանաչում գտավ միայն կյանքի վերջին տարիներին:



1789-1854

Գեորգ Սիմոն Օհմը ծնվել է Գերմանիայի Էրլագեն քաղաքում: Ընտանիքի սուղ բյուջեի պայմաններում հազիվ ծայրը ծայրին հասցնելով՝ հայրը գումար չէր խնայում իր զավակների համար գրքեր գնելիս: Նա Գեորգի մեջ դեռ մանկուց սեր էր առաջացրել մաթեմատիկայի և ֆիզիկայի նկատմամբ: Ազատ ժամանակը նա նվիրում էր երեխաների դաստիարակությանը, ինչի շնորհիվ նրա երկու տղաները դարձան ֆիզիկայի և մաթեմատիկայի պրոֆեսորներ:

Մեր օրերում յուրաքանչյուր դպրոցական ուսումնասիրում է Օհմի անունը կրող օրենքը: Կարող է թվալ, թե դա ֆիզիկայի պարզագույն օրենքներից է: Սակայն արտաքին հայացքից պարզ թվացող այս օրենքի հայտնագործումը Օհմից պահանջեց ոչ միայն խոր գիտելիքներ, այլև փորձարարի մեծ վարպետություն և նպատակին հասնելու զարմանալի համառություն:

Օհմի ժամանակակից շատ խոշոր ֆիզիկոսներ թերահավատորեն էին վերաբերվում այն ժամանակ դեռևս անհայտ ֆիզիկայի ուսուցչի հայտնագործությանը: Օհմի ճանաչումը ուշ տեղի ունեցավ, երբ նրա ուժերն արդեն սպառման եզրին էին: Կյանքի 15 տարիները նա նվիրեց իր հայտնագործության ճշմարտացիությունն ապացուցելուն: Նա կարող էր շատ ավելին անել, եթե կյանքի պայմանները փոքր-ինչ ավելի նպաստավոր լինեին և անհրաժեշտ չլիներ շատ էներգիա ծախսել ոչ գիտական խոչընդոտները հաղթահարելու վրա:

Նրա հայտնագործությունը առաջինը ճանաչեցին արտասահմանում: Օհմի հայրենիքը վերջինը ճանաչեց նրա արժանիքները, միայն մահվանից 10 տարի առաջ նրան ընտրեցին Բավարիայի գիտությունների ակադեմիայի անդամ և որպես արտահաստիքային պրոֆեսորի՝ հրավիրեցին Մյունխենի համալսարան:

Իր ամբողջ կյանքը նվիրելով գիտությանը՝ Օհմը երբեք չամուսնացավ: Նա մահացավ 65 տարեկանում: Մահվանից հետո՝ 1881 թ. Փարիզում տեղի ունեցած էլեկտրատեխնիկական համագումարում գիտությանը մատուցած ծառայությունների համար գիտնականները միաձայն որոշեցին էլեկտրական դիմադրության միավորն անվանել Օհմի անունով՝ 1 Օմ: